

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2**

2013 թ. մարտի 9-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Գիտխորհրդի 35 անդամներից նիստին մասնակցում էին 27-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ 2011-2012 ուստարվա գործունեության հաշվետվություն:

/ զեկ՝ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյան /

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվություն:

/ զեկ՝ ԲՆՖ դեկան Մ.Ավագյան /

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, բնապահպանության և առողջ ապրելակերպի ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/ զեկ՝ ամբիոնի վարիչ Ա.Սիմոնյան /

4.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/ զեկ՝ ամբիոնի վարիչ Բ.Մնացականյան /

5.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվիչ տեխնիկայի ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/ զեկ՝ ամբիոնի վարիչ Հ.Մելիքյան /

6.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/ զեկ՝ ամբիոնի վարիչ Ֆ.Ավետիսյան /

7.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց ԳՊՀ ռեկտոր տիկին Ռ. Հակոբյանը՝ շնորհավորելով կանանց մարտի 8-ի կապակցությամբ: Այնուհետև ներկայացրեց Վարդենիկի ավագ դպրոցի տնօրեն պարոն Բադալյանին՝ կարևորելով դպրոցների հետ համագործակցությունը և

տեղեկացնելով, որ հիշյալ դպրոցի հետ պետք է ստորագրել համագործակցության հուշագիր: Խոսք տրվեց նաև պրն Բադալյանին: Վերջինս հակիրճ ներկայացրեց Վարդենիկը, իրենց ավագ դպրոցը, նրա կառուցվածքը, աշակերտների շարժը: Նշեց, որ վերջին շրջանում ավելացել է հումանիտար մասնագիտությունների գծով դիմող աշակերտների քանակը, իսկ բնագիտական հոսքում ընդգրկվածների քանակը նվազում է: Նա բարձր գնահատեց ԳՊՀ-ի դերը, որը տարածաշրջանում ստանձնել է տարբեր մասնագիտությունների գծով կադրեր պատրաստելու առաքելությունը: Մտահոգություն հայտնեց տրանսպորտային կապի բացակայության համար. Ավելի հեշտ է հասնել Երևան, քան մարզկենտրոն Գավառ: Դպրոցում եղել են ԳՊՀ դասախոսներ: Պրն Բադալյանը կարծիք հայտնեց, որ պետք է սերտացնել համագործակցությունը, որին կնպաստի համագործակցության հուշագիրը: Այնուհետև տիկին Հակոբյանը ներկայացրեց հուշագիրը, որով նախատեսվում են փոխայցելություններ, փոխադարձ օգնություններ: Առաջարկվեց հաստատել համագործակցության հուշագիրը:

Տիկին Հակոբյանը, անցնելով օրակարգի 1-ին հարցին, ներկայացրեց 2011-2012 ԳՊՀ գործունեության հաշվետվությունը՝ նախապես նշելով, որ նրա հիմքում ընկած են Հարինգտոն Էմերսոնի «Արտադրողականության 12 սկզբունքները» աշխատության դրույթները: Հաշվետվությունը տպագրված է:

Բնագիտական ֆակուլտետի 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ դեկան Մ.Ավագյանը: Նա ներկայացրեց գործունեության հիմնական ուղղությունները /աշխատանք ամբիոնների հետ, այցելություններ, դպրոց – համալսարան համագործակցություն, լաբորատորիաների կահավորում, առաջադիմություն և որակ, ընդունելություն, նոր բաժինների բացում, դրամաշնորհային աշխատանքներ, միջոցառումներ և այլն / և այն թերությունները, որոնք հիմնականում կապված են հաճախումների, բացակայությունների, կարգապահության հետ:

Կենսաբանության, բնապահպանության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ Ա.Սիմոնյանը կանգ առավ մի քանի խնդիրների վրա. 1.Թարմացվել են առարկայական ծրագրերը առկա և հեռակա բաժինների համար: 2.Պետք է բարձրացնել ուսանողների ակտիվությունը: Նրանց պետք է ընդգրկել դասախոսության գործընթացում: Վատ է, որ ուսանողները չեն տիրապետում ռուսերենին, իսկ հիմնական գրականությունը ռուսերեն է: 3.Ակտիվացել են մագիստրանտները, որոնք գնում են նաև կենսաքիմիայի ինստիտուտ: 4.Պետք է ստեղծել նոր ձեռնարկներ: Հիմնական թերությունն այն է, որ լաբորատոր աշխատանքները լիովին չեն իրականացվում համապատասխան սարքերի և նյութերի պակասի պատճառով: Չկա մասնագետ լաբորանտ, որը կնախապատրաստի փորձը :

Աշխարհագրության ամբիոնի վարիչ Բ.Մնացականյանը խոսեց անելիքների մասին՝ նշելով հետևյալ հանգամանքները. 1.ուսանողները իրենք են ընտրում թեմաները: Ամբիոնում կան դրանց հիմքերը, 2.կազմակերպվում են նոր դասընթացներ ուստի նոր ծրագրեր են պետք, կարելի է ժամաքանակի վերաբաշխում կատարել: Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ Հ.Մելիքյանը խոսեց առաջադիմության մասին՝ համեմատելով անցած և ներկա կիսամյակների արդյունքները: Նշեց, որ առաջադիմությունը որոշակիորեն բարձրացել է:Այնուհետև արվեցին առաջարկություններ.1.Փոփոխություններ կատարել ծրագրերում: Ծրագրավորման վիճակը վատ է, ծրագրավորող դասախոսներ չկան, 2. Մագիստրատուրայում կիրառել նոր մեթոդներ. Պետք է նրանց մղել հետազոտական աշխատանքի , 3. Հրավիրել ժամանակակից տեխնոլոգիաների գծով մասնագետներ՝ ակնարկային դասախոսություններ կարդալու համար:

Ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի վարիչ Ֆ.Ավետիսյանը ևս խոսեց ծրագրերի, գործնական աշխատանքների, լաբորատորիաների կահավորման և հարակից այլ հարցերի մասին:

Զեկուցումներից հետո ելույթ ունեցավ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա առաջարկեց անցկացնել 1-ամյա միջոցառում՝ նվիրված մայրերին /<<Ձոն մայրերին>>/, դպրոցներում կազմակերպել շարադրությունների մրցույթ, շարունակել աշխատանքները զինվորների հետ:

Պրոռեկտոր Ն.Կուտուզյանը անդրադարձավ կառավարման խորհրդում խորհրդի նախագահ Հ.Հակոբյանի նշած սկզբունքներին, որոնցով պետք է առաջնորդվի համալսարանը:

Որոշեցին՝

- 1.ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. ԳՊՀ ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- 3.ԳՊՀ ԲՆՖ կենսաբանության, բնապահպանության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ Ա.Միմոնյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- 4.ԳՊՀ ԲՆՖ աշխարհագրության ամբիոնի վարիչ Բ.Մնացականյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

5.ԳՊՀ ԲՆՖ ինֆորմատիկայի և հաշվիչ տեխնիկայի ամբիոնի վարիչ Հ.Մելիքյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

6.ԳՊՀ ԲՆՖ ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի վարիչ Ֆ. Ավետիսյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

7.Կազմակերպել մեկամսյա միջոցառում՝ նվիրված մայրերին, դպրոցներում անցկացնել շարադրություն՝ «Ձոն մայրերին» վերնագրով:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան